ԱՌԱՋԱԲԱՆ

Պատմագիտության բնագավառում ժողովրդագրական խնդիրներին հատկացվում է առանձնահատուկ տեղ: Այդ հանգամանքը պայմանավորված է ոչ միայն զուտ գիտական, այլ նաև քաղաքական հանգամանքներով: Էթնոժողովրդագրական հարցերի պարզաբանումը հրամայական խնդիր է այն առումով, որ ի վերջո հնարավորություն է տալիս պատասխանել այն հարցին, թե տվյալ տարածաշրջանում կոնկրետ պատմության, մշակույթի և առհասարակ՝ քաղաքակրթության կրողներն ովքե՞ր են, ի՞նչ ազգություն ու էթնիկ հանրություն են ներկայացնում: Այդ տեսակետից ժողովրդագրական հիմնահարցերն առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հայ ժողովրդի համար, որը 1915թ. Հայոց մեծ եղեռնից հետո կորցրեց իր պատմական հայրենիքի մեծագույն մասը:

Հայաստանի ժողովրդագրության հիմնահարցերը բազմապիսի են: Դրանք ընդգրկում են Հայոց վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերն ընկած դարաշրջանների խնդիրները՝ հայ ժողովրդի էթնոգենեզի հարցեր, Հայկական լեռնաշխարհում առաջին պետական կազմավորումների, Ուրարտու պետության էթնիկ դիմագծի վերհանում, հին և միջնադարյան Հայաստանի բնակչության թվաքանակի, տեղաբաշխման ու տեղաշարժերի լուսաբանում, օտար տիրապետությունների երկարատև ժամանակաշրջաններում այլալեզու էթնիկ տարրերի ներթափանցում և ոչ հայանպաստ էթնոգործընթացներ և այլն:

Հայ պատմաբանների ու ժողովրդագիրների գլխավոր խնդիրներից մեկը պետք է հանդիսանա նաև այն հարցի պարզաբանումը, թե թուրքական դժնդակ տիրապետության շրջանում հայ ժողովուրդը ինչպես է դարեր շարունակ ենթակվել բռնի ազգաձուլման, կրոնափոխության, արտագաղթերի և ի վերջո, Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում վերածվել է բնակչության փոքրամասնության, հանգամանք, որը մեծապես պայմանավորել է հայ ազատագրական շարժման անհաջողությունները և արևմտահայության նկատմամբ ցեղասպանության երիտթուրքական դիվային ծրագրի իրագործման հնարավորությունը:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը, հանրապետության համապատասխան մասնագետների հետ կարևորում է այդ հարցերին նվիրված ժողովածուի հրատարակումը: Գրքում տեղ գտած հոդվածները նախապես ներկայացվել են մասնագետների ուշադրությանը «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան» հայագիտական գիտաժողովի /2004թ. հունիսի 17-19/ շրջանակներում:

«Հայոց պատմության հարցեր» հանդեսի սույն համարն իր բնույթով տարբերվում է նախորդ համարներից, այն Հայաստանի պատմական ժողովրդագրությանը նվիրված առաջին ժողովածուն է և համոզված ենք, լուրջ խթան կհանդիսանա պատմագիտության այդ կարևոր բնագավառի հետագա զարգացման համար: